

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ

Պ Ր Պ Տ Ո Ւ Մ Ի Փ Ո Ր Ջ Ե Ր

Մ Ա Ս Ն Բ

(Շար. տե'ս թաղմավէտ 1947, էջ 227)

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՇԷՆՔԵՐՈՒ ՎՐԱՅ

Գ. - ԲԱԳԱՐԱՆԻ Ս. ԹԵՈԴՈՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ.

Հայկական շէնքերու բաղմաձեւ յատա-
կագիծերուն մէջ աչքի կը զարնէ խաչաձեւ
եկեղեցիներու յատակագիծերը, երեք կամ
չորս խորանով (abside), քառանկիւնի մը
կողմերուն վրայ զետեղուած: Այսպէս են
Հատիչայի, Կարսի, Ալամանի, Էջմիածնի
և Բագարանի եկեղեցիները:

Հայկական շէնքերու վրայ ներդաշնակու-
թեան կանոններու պրպտութիւններուն շար-
քին պէտք է քննենք նաեւ այս խաչաձեւ
շինութիւնները և փնտռենք համաչափու-
թեան և ներդաշնակութեան կանոնները,
որոնք խորիսխը կազմած են այս շինուածք-
ներու ձեւաւորումին:

Մեզի ներկայացող յատակագիծներուն
մէջէն ամէնէն յարմարը կը գտնենք Բա-
գարանի Ս. Թէոդորոսինը՝ որ մնացած է
անփոփոխ և կոյս, առանց չափազանց յա-
ւելումներու հետագայ դարերուն մէջ կատա-
րուած: Գլխին է այս յատակագիծէն զանց
ընել երկու պահարանները որոնք աւել-
ցուած են վերջէն, երկու դուռս ցցուած
սենեակներու ձեւին տակ (պատ. 1):

Պարագան, դժբախտաբար, նոյնը չէ
Էջմիածնի մայր տաճարին համար, որ շատ

յաւելումներ և նորոգութիւններ կրած ըլլա-
լով դարերու ընթացքին՝ իր իսկական և
նախնական տեսքը շատ դժուար պիտի ըլլար
ի յայտ բերել, ներդաշնակութեան տեսա-
կէտէն զայն քննելու համար:

Թ. Թորամանեան այս մասին կը գրէ.

« Ի սկզբան Էջմիածնի տաճարը արտա-
քուստ ունեցեր է պարզ ուղղանկիւն քա-
ռանկիւնի ձեւ մը՝ առանց դուռս ցցուած
խորաններու: Ասոր ապացոյցներէն մին՝
քարերու շարուածքներուն և որմաշինու-
թեան որակին, միւս (խորանի) պատերուն
հետ ո՛ր և է կապ չունենալն է: Ուրիշ ա-
պացոյց մըն ալ՝ հարաւային ճակտի խորանին
(abside) անմիջապէս յաջորդող պատուհան-
ներու դուռս ցցուած լայն կամարներուն
(archivolte), հետագայ շրջանին շինուած
խորանին ետեւը մնացած ըլլալն է ⁽¹²⁾ »:

Եթէ նկատի առնենք Էջմիածնի տաճա-
րին նախնական՝ ուղղանկիւն քառանկիւնին
կողմերուն չափերը, 24.50 մեզր հիւսի-
սային ճակատը և 23.02 մեզր արեւելեան
ճակատը, կ'ունենանք որպէս ներդաշնակ
համեմատութիւն $\sqrt{2}$ ը, ինչ որ պիտի չտար-
բերի՝ քիչ անդին մեր տեսնելիք Ս. Թէոդո-
րոսի ներդաշնակութեան թիւէն որ է, հոն
ալ $\sqrt{2}$:

12. Թ. Թորամանեան. « Հայկական ճարտարապե-
տութիւն », Երեւան 1942.

Եթեմերորդ դարու առաջին քառորդին
Բուդ Առաւելեան իշխանին շինած Ս. Թէո-
դորոս անուամբ եկեղեցին կը գտնուի Բա-
գարանի ձորին հարաւային ծայրը, բար-
ձունքի մը վրայ: Անոր յատակագիծը կը
ներկայանայ, քառակուսի կեդրոնական շի-
նուածքի մը վրայ չորս կիսաբոլորակ թեւե-
րով (պատ. 1): Այս թեւերը՝ եթէ ներքսա-
պէս բոլորակ են, արտաքուստ սակայն՝ ան-
կիւնաւոր են: Այս պարագան կ'արժէ նկատի
առնենալ ներդաշնակ գիծի ուսումնասիրու-
թեան առեւ: Ներքին չորս անջատ մոյթեր,
իրարու հետ կամարներով կապուած, վեր
կը բռնեն կաթողիկէն:

Շինուածքի յարդարումին այս ձեւը զգա-
լապէս կը տարբերի Է.րդ դարու խաչաձեւ
միւս շինութիւններէն: Արդարեւ, այս տար-
բերութիւնը առաջ կու գայ այն պարա-
գայէն՝ որ Ս. Թէոդորոսի մէջ կաթողիկէն
զետեղուած է անջատ մոյթերու վրայ, մինչ-
դեռ միւս խաչաձեւ, կիսաբոլորակ թեւերով,
եկեղեցիներու կաթողիկէները զրուած են
նոյնիսկ կիսաբոլորակ խորաններու (abside)
վերջաւորութեանց վրայ: Այս վերջաւորու-
թիւններուն առհասարակ կու տան որմա-
սիւնի կերպարանք: Այս է պարագան, օրի-
նակ Հատիչայի, Աղթամարի, Մաստարայի,
Թալինի եկեղեցիներուն:

Սակայն կրնանք ասոնք նկատել սկզբնա-
կան ձեւի մը փոփոխակները, և անոնց այս
տարբերութիւնը ոչ մէկ փոփոխութիւն կը
բերէ իրենց ընդհանուր գծագրութեան և
ներդաշնակ գիծի հաստատութեան մէջ:

Ճարտարապետական յղացումի տեսակէ-
տով, խաչաձեւ յատակագիծը իսկական հայ
ոճի արտագրութիւն չէ, այլ ներածում մը
հարաւէն՝ սիւրբական և իրանական դպրոց-
ներէ:

Թորամանեան ընդունելով այս ներածու-
մը ⁽¹³⁾ չի կրնար սակայն ճշտել բուն թուա-

կանը այս ձեւ շինութեանց հայոց մէջ
մուտք գտնելուն: Սա միայն ծանօթ է որ
խաչաձեւ շինութիւններու ամէնէն հինները
է. դարէն անդին չեն անցնիր:

Ստրէկովսքի քննելով իր կարգին այս
ձեւ շինութիւնները, մասնաւորաբար Բագա-
րանի Ս. Թէոդորոսը, կը գտնէ աչքառու
նմանութիւն մը անոր և իրանեան կրակա-
պաշտական տաճարներէն « Հուրի տա-
ճար » ներու, մանաւանդ անոր չորս անջատ
մոյթերուն պատճառաւ: Ան այս մասին
խօսելով՝ կը գրէ ⁽¹⁴⁾.

« il y a un second type du temple du
feu, c'est l'édifice cruciforme avec quatre
piliers détachés à l'intérieur. De tels
édifices ont laissé, dans l'Iran, de nom-
breux vestiges.... Ce type est conservé
dans une église d'Arménie, celle de
Bagaran, qui d'après une inscription a
été bâtie à l'époque de Peroz Parviz
(624-631). Fait caractéristique, le roi
sassanide y est nommé. Nous avons
trouvé, il est vrai, la coupole écroulée,
mais les trompes qui subsistent en
démontrent, à n'en pas douter, l'exi-
stance ⁽¹⁵⁾. Une église de même genre

14. J. Strzygowski, « L'ancien art chrétien de
Syrie », էջ 68. Paris 1936.

15. Ստրէկովսքի այս հաստատումը, կաթողիկէ
կամարակներու մասին ցոյց կու տայ թէ կամարակնե-
րու շինութիւնը Է. դարուն ծանօթ էր Հայաստանի մէջ,
և թէ օրինակ Տեկորի կաթողիկէն վեր բռնելու համար
կատարուած շինուածքները, որ աւելի նախնական ձեւ
մըն է, պէտք է զործածուած ըլլայ նախ քան կամա-
րակներու դրութեան հայոց մէջ զործածուելը: Ինչ որ
մեզ կը տանի Է.րդ դարէն աւելի հիւսու և մասամբ
Տեկորի շինութեան շրջանը կը հաստատէ, աւելի հին
քան Է.րդ դար: Այս պարագան ուղեցի հոս մասնաշին-
ւորով հետեւ ընդհանրապէս բանասիրական տուեալներէ
մեկնելով և Տեկորի մէջ գտնուած արձանագրութիւննե-
րու վրայ հիմնուելով, ընդհանուր կարծիքը այն է որ
Տեկոր եւ Է.րդ դարու զործ ըլլայ: Մինչդեռ կը տես-
նենք թէ անոր շինութեան ձեւը աւելի հին և նախնական
ձեւ մըն է և կը համապատասխանէ Է.րդ դարէն աւելի
հին ձեւի շինութեան մը:

13. Թ. Թորամանեան՝ « Հայկական ճարտարապետու-
թիւն » աշխատութիւններու ժողովածու, Երեւան 1942.

կը կազմեն խորաններու արտաքին բազման-
կիւնի շրջագիծը:

Ութթեւեանը կարգադրող ներդաշնակ
գիծի համեմատութիւնը ըլլալով $\sqrt{2}$ -ը,
այս կը կազմէ նաեւ խաչաձեւ յատակա-
գիծը վարող համեմատութիւնը:

Նախապէս յիշուած՝ Ստրիկովսքիի խօս-
քովը, Բագարանի Ս. Թէոդորոսի կաթո-
ղիկէն կործանած է և կը մնան միայն կա-
մարակները զայն յիշեցնող: Lund-ի հա-
մաձայն, զուգաբարձ եռանկիւններու ներ-
դաշնակ գիծին դրութեամբ կարելի կ'ըլլայ
վերակազմել՝ իր ընդհանուր գիծերուն մէջ՝
կործանած կաթողիկէին զանգուածը
(պատ. 3): Ասոր համար ալ որպէս շէնքին
հիմնական խարիսխ նկատուած է կեդրո-
նական քառակուսին, որուն շորս կողմերուն
վրայ աւելցուած խորանները հայկական
ոճին համար չեն կրնար մաս նկատուիլ
հիմնական յատակագիծին, ինչպէս որ է
պարագան Էջմիածնի Մայր տաճարին հա-
մար՝ զոր տեսանք աւելի վերը:

Վերակազմութեան այս օրինակը մասնա-
ւորապէս կը դնեմ ցոյց տալու համար թէ
ի՞նչ դեր կրնայ խաղալ ներդաշնակ գիծի
դրութիւնը շէնքի մը կազմութեան և կամ
վերակազմութեան տեսակէտէն, փնտռուած
համեմատութեանց համաձայն զանգուած-
ները բնորոշելով:

Ճարտ. Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

(Շարունակելի)

ԱՇՆԱՅԻՆ ԻՐԻԿՆԱՄՈՒՏ

Մեղմ իրիկունն
Ըստուերներուն
Մէջ տփգոյն՝
Փըռեց երկար
Իր տրամալար
Թախծութիւն...:

Ինկան արդէն
Ծառ ու ծաղկէն
Բոց ամէն,
Գիշերն հիմայ
Ալ պիտի գայ
Ծանրօրէն...:

Հոս ամէն ձայն
Կ'ըլլայ դամբան
Լըռութեան.
Միջատ ու բոյս
Ալ մահասոյզ
Կը քնանան:

Մինչ խեղճերուն
Վիշտն յարաճուն
Սյս պահուն
Օ՛ անխընայ
Պիտի շատնայ
Գալարուն...:

Պիտի սուգով,
Արտասուքով
Հոգեխռով՝
Բաժակն յորդի՛
Վշտի յուռթի
Ակերով...:

Թող գիշերուան
Ըլլայ շրջանն
Անսահման.
Ննջեն ընդմիջտ
Մորմոք ու վիշտ
Մարդկութեան:

Քեզ ալ օրօր-
Սիրտ վերաւոր,
Վշտածոր
Քունն է միայն
Երանական
Քու անդորր...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ